ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐ

(2024-2025 ուստարի)

Ողջո՛ւյն, սիրելի՛ մասնակից
Հայ գրականության օլիմպիադան նվիրվում է Ծմակուտի քուրմի՝ Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 90-ամյակին, և քանի որ տարին հայտարարվել է Մաթևոսյանական, դու էլ սրբազան աղոթքով խնկարկի՛ր նրա անմահությանը:

«Գրականություն պետք է մտնել պատասխաններով: Պատասխաններով»:
Հրանտ Մաթևոսյան

12-րդ դասարան

1. Ո՞ւմ է բնութագրում հետևյալ ասույթը.«Նրա երգերը շատ գեղեցիկ են և գրեթե մեր լիրիկայի մեջ բոլորովին նոր բաներ».ո՞վ է հեղինակը: Ի՞նչ շարք է գրել Եղիշե Չարենցը այս հեղինակի մասին (գրի՛ր թեկուզ երկտող այդ շարքից): Վերլուծի՛ր այդ հեղինակի որևէ բանաստեղծություն՝ քո՛ ընտրությամբ:

10 մ.

2. Օտարագիր ո՞ր հայ գրողն է աշխարհով մեկ հայտարարել.«Ուր որ կերթաս՝ պոռա Հայաստան»: Ի՞նչ գիտես այդ հեղինակի մասին: Անդրադարձի՛ր նրա՝ հայրենիքով ապրելու, իր արմատներով մարդ մնալու ճշմարտությունը հաստատող որևէ ստեղծագործության:

10 մ.

3. Համո Սահյանի բնապաշտությունը: Սահյանը բնության և մարդու հոգու թարգման: «Անտառում», «Հողմը անտառում», «Քարափը», «Նաիրյան դալար բարդի», «Օրը մթնեց», «Մասրենի» (կարող ես ընտրել քո ցանկությամբ՝ քո իմացածները): Վերլուծի՛ր երկու բանաստեղծություն:

10 մ.

4. Ծմակուտի քուրմի բանաստեղծական աշխարհը «Աշնան արև» վիպակում: Հերոսուհու ապրած կյանքի վերապրումը մեկ օրից էլ քիչ ժամանակում: Վիպակի տարբեր վերնագրերի բացատրությունը: Աղունը՝ որպես վիպակի բոլոր հերոսների բանալի: Աղուն և Սիմոն: Ինչո՞վ են նույնանում նրանք:

10 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան